ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Արթուր Սիրադեղյան, ՀՀ ԿԳՄՍՆ «Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն
2. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Էստոնիայի Հանրապետություն, ք. Վալգա, 2026 թվականի մայիսի 11-ից 21-ը ներառյալ:
3. **Հրավիրող կողմը**
   Էստոնիայի Հանրապետության Վալգա քաղաքի Վալգամաա մասնագիտական ուսումնական կենտրոն:
4. **Գործուղման նպատակը**
   Կնքել միջազգային համագործակցության հուշագիր, ինչպես նաև մասնակցել 2026 թվականի մայիսի 14-ին Տարտու քաղաքում կազմակերպված Էստոնիայի մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն միջոցառումներից մեկին՝ էստոնական ամենամյա «Young Master» («Երիտասարդ մասնագետ») մասնագիտական հմտությունների մրցույթ-փառատոնին:
5. **Քննարկված թեմաները**

- Հետագա երկարաժամկետ համագործակցության հնարավոր ուղիները
- Դասախոսների և ուսանողների միջև փորձի փոխանակման ծրագրերի իրականացումը
- Կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունների իրականացումը
- Աշխատանքի վրա հիմնված ուսուցման եվրոպական փորձի ուսումնասիրությունը
- «Սոցիալական աշխատանք» մասնագիտության դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդները
- Պրակտիկայի կազմակերպման և ամփոփիչ ատեստավորման ձևերը մասնագիտական կրթության ոլորտում
- Միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորությունները
- Նորարարական և գիտական կրթական միջավայրերի կիրառման հնարավորությունները ուսումնական գործընթացում

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը:** Գործուղման ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Վալգամաա մասնագիտական ուսումնական կենտրոնի ղեկավարության, դասախոսական կազմի,ինչպես նաև Իսպանիայի և Լիտվայի մասնագիտական կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ:

Քննարկվել են համատեղ կրթական ծրագրերի, ուսանողների և դասախոսների փոխանակման, ինչպես նաև Erasmus+ և այլ միջազգային ծրագրերի շրջանակներում համագործակցության հնարավորությունները:

Տարտու քաղաքում մայիսի 14-ին պատվիրակությունը մասնակցել է «Young Master» մասնագիտական հմտությունների մրցույթ-փառատոնին, որի ընթացքում պատվիրակության անդամները ծանոթացել են ժամանակակից մասնագիտական կրթության կազմակերպման մեխանիզմներին, ուսումնական նոր տեխնոլոգիաներին և գործնական հմտությունների զարգացման մոտեցումներին:

Քոլեջի պատվիրակության անդամները Իսպանիայի Malaga քաղաքի La Rosaleda քոլեջի խոհարարության բաժնի ուսանողների հետ իրականացրել են համատեղ գործնական աշխատանքներ՝ ներկայացնելով և սովորեցնելով հայկական ավանդական կերակրատեսակների պատրաստման առանձնահատկությունները:

Ուսումնասիրվել է Էստոնիայի «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունը, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդները: Այցելություններ են իրականացվել պրակտիկայի անցկացման բազաներ՝ սոցիալական ծառայության կենտրոններ, պոլիկլինիկա, առանձնահատուկ խնամքի կարիք ունեցողների տներ և մեծահասակների խնամքի կենտրոններ:

Բացի այդ, ուսումնասիրվել են «Սոցիալական աշխատանք» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման անցկացման ձևերը և գնահատման մեխանիզմները:
Պատվիրակությունը եղել է նաև Տարտու քաղաքի AHHAA Science Centre-ում, որտեղ ներկայացված էին ֆիզիկայի և այլ գիտությունների օրենքների ցուցադրություններ: Ուսանողները մասնակցել են տարբեր գիտափորձերի և ինտերակտիվ ցուցադրությունների, ինչը նպաստել է նրանց գործնական և ճանաչողական հմտությունների զարգացմանը:

Այցելություն է կատարվել նաև Տարտուի համալսարան, որի ընթացքում պատվիրակությունը շրջել է համալսարանի լսարաններով, համալսարանի թանգարանով և այցելել հայ մեծանուն գրող Խաչատուր Աբովյանին նվիրված լսարան:

Այցի ավարտին պատվիրակության անդամները ստացել են մասնակցության վկայականներ, որոնք կցվում են հաշվետվությանը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**:
Կողմերի միջև ստորագրվել է միջազգային համագործակցության հուշագիր (կցվում է հաշվետվությանը), որով նախատեսվում է իրականացնել փորձի փոխանակում, համատեղ ծրագրեր և կրթական համագործակցության այլ նախաձեռնություններ: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ զարգացնելու երկարաժամկետ համագործակցություն մասնագիտական կրթության ոլորտում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև հունիսի 7-ից 12-ը Էստոնիայի քոլեջի թվով 8 դասախոսների՝ Հայաստան՝ Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջ փոխադարձ այցի վերաբերյալ, որի ընթացքում նախատեսվում է ներկայացնել քոլեջի «Սոցիալական աշխատանք» մասնագիտության պրակտիկայի բազաները, այդ թվում՝ Վարդենիսի ՄՍԾ, Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոնը, «Աստղավարդ» ՀԿ-ն և World Vision Armenia-ի Վարդենիսի գրասենյակը, ինչպես նաև այցելություններ Հայաստանի պատմամշակույթային վայրեր:

Էստոնիայի Վալգամաա քոլեջի տնօրենի կողմից քոլեջին նվիրաբերվեց 7 հատ նոթբուք, ճիշտ է դրանք ամբողջովին նոր չէին, բայց նոր սերնդի ժամանակակից նոթբուքներ են, որոնք կծառայեն օտար լեզուների դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներ կիրառելու ժամանակ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները Առաջարկվում է.

   - ✓ 2026-2027 ուսումնական տարվանից նախաձեռնել ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր
   - ✓ Կազմակերպել համատեղ առցանց և առկա աշխատաժողովներ՝ կրթական ծրագրերի համադրման նպատակով
   - ✓ Զարգացնել երկու կողմերի նույն մասնագիտությունների ոլորտներում միջազգային փորձի փոխանակումը
   - ✓ Ուսումնասիրել Erasmus+ և այլ միջազգային դրամաշնորհային ծրագրերին համատեղ մասնակցության հնարավորությունները
   - ✓ Քոլեջում ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսուցման եվրոպական փորձի առանձին բաղադրիչներ

Ակնկալվում է միջազգային համագործակցության ընդլայնում, կրթության որակի բարձրացում, դասավանդման մեթոդների արդիականացում և ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացում:

9. Ստորագրություն, ամսաթիվ 25.05.2026թ.

Տնօրեն՝ Ա. Սիրադեղյան